ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԹ 1891 ՓԵՏՐՈՒԱՐ


# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

## ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԵՐԷՆ ԳՐՉԱԳՐԱՑ

## ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ ՄԽԻԹԱՐԱՅ

## Ի Ս· ՂԱԶԱՐ ՎԵՆԵՏԿՈՅ

*ՈՉ միայն ազգային, այլ նաև արևմտեան օտար բանասիրաց մեծապէս հանոյական և ընդունելի կը յուսանք որ ըլլայ՝ Մխիթարեանցս Սրբոյն Ղազարու Մատենադարանին հայկական գրչագրաց ցուցակը, զոր կը սկսինք հրատարակել:*

*Ուրիշ առթով ալ յայտնած ենք, թէ որչափ փափաքելի է՝ թէ՛ ի բուն հայրենիս մեր՝ ազգային այլ և այլ հաստատութեանց, և թէ եւրոպական քանի մը գլխաւոր մայրաքաղաքաց Մատենադարաններում մէջ պահուած հայերէն գրչագրաց ընդհանուր ցուցակի մը հրատարակութիւնն. և որ անշուշտ բազմաշահ ծառայութիւն մը պիտի մատուցանէ ուսումնասիրաց: Գործադրութիւնն դիւրացընելու կերպին ու հրատարակութեան միջոցներըն ալ առաջարկեցինք, մեծանուն բարերարին Իզմիրեանց Յովսեփայ քաջալերիչ կտակին Գործադիր Յանձնաժողովոյն: Չենք տարակուսիր որ ըստ ժամանակին նկատողութեան առնուի մեր այս առաջարկը:*

*Բանասիրաց արդէն ծանօթ է թէ Էջմիածնի հայրապետական աթոռոյն վանուց, Մոսկուայի Լազարեան ուսումնարանին և Պեռլինի արքունի Մատենադարանաց հայկական գրչագրաց ցուցակք հրատարակուած են տպագրութեամբ, իբրամէ նուազ*



digitised by A.R.A.R.@

*կամ աւելի հանգամանօք կատարելութեամբ: Մեր հրատարակել սկսած ու առաջարկած ցուցակաց մէջ՝ ցանկալի երեւցած է ճոխագոյն ըլլալ քան զնախընթաց արդէն հրատարակեալս՝ տալով օգտակար տեղեկութիւններ ձեռագրաց յատկութեանց, և անոնց ոչ լոկ ուսումնական, այլ նաև արուեստական արժէից նկատմամբ, որք մեծ կարևորութիւն ունին բանասիրաց և հնագրական ուսմանց հետամտից համար: Առայժմ պարզ օրինակ կամ գործադրութեան կերպին գաղափար մ'է այս, որ ազգային և օտար քննադատից և հմտից տեսութեամբք և առաջարկութեամբք կրնայ, և հարկ է որ կրէ այլևայլ փոփոխութիւններ, աւելի օգտակար կերպով ծառայելու իր նպատակին և դիտած վախճանին:*

*Ոմանց փափաքելի ըլլար թերևս որ այս մեր ցուցակ՝ նիւթոց համեմատ դասակարգութիւն ունենար: Բայց աւելի պատշաճ՝ և գործածողաց համար դիւրին երևցաւ այբուբենի կարգին հետևիլ, միայն նախադասութիւնն ընծայելով Հին և Նոր կտակարանաց, որոնք թէ՛ նիւթովն և թէ լեզուով՝ մեր մատենագրութեանց ընտրելագոյն գանձք կը սեպուին իրաւամբ: Անոնցմէ առ մեզ գտնուած հնագոյն օրինակին վրայ խօսած ատեննիս՝ դրինք նաև սուրբ գրոց և յարակից նախադրութեանց, գլխոց և այլոց, կարգաւորութիւնը, աւելորդ սեպելով կրկնել զնոյն նաև միւս օրինակաց համար, որ ընդհանրապէս նման են իրարու: Տարբերութիւն մը գտած ատեննիս՝ ջանացեր ենք նշանակել զայն:*

*Այս ցուցակը աւելի հետաքննական ընելու դիտմամբ, պէտք եղած ատեն նմանահան օրինակներ ալ պիտի դնենք ի հնագոյն և յընտրելագոյն գրչագրաց, և անոնց որ պատմական կամ մատենագրական կարևորութիւն մը ունին. ինչպէս ջանացեր ենք ընել «Շիրակ» «Սիսուան» Այրարատ» և հիմա տպագրութեան ընթացքի մէջ եղող «Սիսական» երկասիրութեանց մէջ:*

# ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔ

## ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՔ

### Ա

**Ա· ՕՐԻՆԱԿ** (*Թիւ գրչ· Մատենադարանիս* 1508) ***մագաղաթեայ, բոլորգիր ընտիր։ — Երկայն 0·26։ Լայն 0· 18։ Ամէն մէկ էջը երկու սիւնակի բաժնուած. իւրաքանչիւր սիւնակ՝ ընդհանրապէս յիսունուիրեք տող։ Բովանդակ մատեանն ամփոփեալ ի 1074 էջս։ — Գրիչն է՝ ինչպէս կ'ակնարկեն յիշատակարանք, Յովհաննէս ոմն, և գրուած է ի չորեքտասաներորդ դարու, ի ՉԿԸ (= 1321) Թուականի Հայոց։ Ընդհանրապէս թէ՛ ի մերում Մատենադարանի և թէ այլոց քով գտնուած օրինակաց վրայ գիտուած է որ գրչութիւնք աստուածաշունչ տառից՝ հմուտ և արուեստագէտ ճարտարաց յանձնուած են։ Սուրբ գրոց ընծայուած արժանաւոր պատիւ, մեծարանք և կարևորութիւն զայն կը պահանջէր. բայց Յովհաննէս գրիչ՝ այդ ճարտարաց մէջ ալ ճարտարագոյններէն մէկը կրնայ սեպուիլ իրաւամբ, և գրեթէ անսագիւտ է ի մոտագիր և յերկիւղած զգուշաւորութեան, յանսխալ գրչութեան և ի յստակ մաքրութեան տառից։ Ամենընտիր է դիմացն եղած գաղափարը, Գէորգ վարդապետի օրինակը, զոր իրաւացի գովութեամբ կը դրուատէ ի յիշատակարանսն, և որոյ անծանօթ է գրչութեան թուական։***

digitised by A.R.A.R.@

Ի սկիզբն գրուած է «Նախադրութիւն Ծննդոց»․ ապա «Գլուխք Ծնընդոց»։

Յ՚էջն 3, առանց վերնագրի և խորանի՝ սկզբնաւորութիւն Ծննդոց գրոց։ Ի ստորև, ինչպէս նաև հետևորդ իջից, «Ծնունդք»։ Ի վերջ գրոցն «Կատարեցաւ Ծնունդք»։ Ապա յետագայ ոտանաւոր մաղթանք․

Աստուած անմեղ՝ անմահ և տէր յաւիտենից,
Որ կամեցար, և հաստեցեր զայս յոչնչից։
Ըզմարդն ի դրախտն՝ եդեր զգալեաց տերել բնաւից,
Եւ վայելել՝ զաւ ի միայն յամէն փայտից։
Ըզյանցաւորն՝ եղեալ կենաց քոց բանից,
Ուղիղ դատաստանաւ՝ հաներ յաշխարհ այս անբանից։
Այլ հանեցար՝ որք ի ծննդոց նորին զարմից՝
Քեզ մատուցին՝ կրկին ընծայ հոտ անուշից․
Փոխել զոմանս՝ ի մահացու այս կայանից,
Զայլս պահել՝ ի ջրով հեղձմանէն համայնից։
Ի կտակաչաւել՝ հանուր մարդկան հետ ոչընչից,
Երեւեցար՝ Աբրահամու մէջ քաղդէից։
Եդեր ըղնա՝ հայր հաւատով քրիստոնէից,
Թէ և մարմնով՝ իցեն յազգաց անթլփատից։
Որ՛վ տէր ընկալ՝ զայս քեզ ընծայ ի հնացեալ տառից,
Ի մեղաւոր ձեռացս ցոյցք հողոյ ըղձից։
Յուսով սկսեալս՝ ի կատարել բոլորից,
Ճամանեցո ի լրումն քոց սուրբ մատենից։
Ճառանդեցա Լուսաւորչին զայազանից,
Դայեկաբար ջամբեցողաց զկաթն իմաստից։
Որոց նախին տանս յաշխարհին տրեւելից,
Ուր ապրեցաւ սուրբն անձեռ ի մէջ ունից։

Յետոյ անմիջապէս կը գրուի «Նախադրութիւն Ելից»․– «Գլուխք Ելիցն», ապա «Ելք», ինչպէս նաև ի ստորեւս իւրաքանչիւր իջից։ Ի վերջն՝ «Կատարեցաւ Ելքս»։ Ապա ոտանաւորս․

Տէր որ ի տեղ մեծ փրկեա՝ նաւս որ ի վերջոյ,
Լուար յերկնպառ՝ ըլկեցելոյն դոչելոյ։
Առաքեցեր, զՄովսէս փրկիչ տանն Յակոբու,
Ազատեցեր՝ զհինն Իսրայէլ ի խիստ կաւոյ։
Ջնջելիչ նոցին՝ ընկղմեցեր ի խորս ջրոյ,
Եւ զնեղեալսն՝ սփոփեցեր ի սիւն ամպոյ։
Ըզմանանայն՝ հեղեր ի տեղ քո սուրբ մարմնոյ.
Ըզվիմնաբուղխ՝ ջուրն արբուցման հոգւոյդ սրբոյ։
Առեր առ քեզ՝ զմեծն Մովսէս ի մէջ հրոյ.
Եւտուր նովաւ՝ ազգի մարդկան զաւրէնս քո։
Մաղթեմ տէր լոյծ՝ զհողիս ի խիստ մեղաց կապոյ,
Քեզ հետևել՝ յելս վերին կառուք ամպոյ։

«Զմեղաւոր հոգս Յովհաննէս զգրաւղս սուրբ տառիս, և զծնաւղսն իմ, և զեղբարս իմ զՍմբատն և զՎասիլ, և զամենայն ազգատոհմն իմ. յիշեցէք ով սուրբ ընթերցաւղք և տեսաւղք, և տէր զձեզ յիշէ. և անուն մի քերէք, զի չար սովորութիւն է. և թէ արժանի էք, գրեցէք և զձեր անունդ յայլում տեղւոջ։

Ցեռոյ «Նախադրութիւն Ղեւտականին» — «Գլուխք Ղեւտականին» — «Ղեւտականն», որպէս և ի սորեա իջիցն. — Կատարեցաւ Ղեւտականն։

Քրիստոս Փ. կէչ տատուածդ քան,
Աւծեալ մարմնով յեւղ ընծայութեան:
Որ ի պաշտաւն երիցութեան,
Աւետ զտաւնն ահաւորնեան.
Զոշոտել զտաւարն աւրինական,
Զփոփոխելին և զառաւելեայն:
Ի հաստատել այնր վախճան,
Զի զայցէ մեծն և մեծագական:
Նորեր մարմնով կցորդ մարդկան,
Մեծ քահանայ Աստուծոյ տան:

Գետ քան զշափն մովսիսեան,
Ըստ կանխագոյն բանին երդման.
Դու քահանայ ես յաւիտեան,
Մելքիսեդեկի հըմարտութեան:
Ոչ ընդ անձին, այլ ընդ մարդկան.
Մին պատարագն էր բաւական:
Նստիս ընդ հաւր միշտ յաւիտեան,
Բարեխաւսես վասն մարդկան:
Զմեզ ընծայես հաւատոյ բան,
Զի փրկեսցուք ի հրոյն կիզմանէ:

Այսպէս Նախադրութիւն Թուոց. — Գլուխք Թուոց. — Թիւք. — Կատարեցաւ Թիւքս։

Զբայց Թուոցս մտանեմք,
Լրումն խառնմանն որ է յայսմիկ.
Թէ զաւակ քո հայր բազմասցի,
Իբրև զաւազ որ ոչ չափի:
Կարծեմ խորհուրդ իմն այլ ունի,
Զորմէ խաւսել չէ անտեղի:
Ի Թուել ցեղին Իսրայելի,
Քան զվաթսուն բևրն աւելի:
Զմարդն ի Թիւն հանդիսի,
Որք չեւ էին քսանամենի:
Ահա Թուեցաւ բոլոր ազգի,
Միայն անթիւ անդիմանելի:
Զինչ իմասցուք արդ հաւատով,
Զորոց չեղեն հարեալ զգիր:
Թուի թէ այնու այս յայտ լինի,
Թէ չառ ինչ մեզ չէ զիտելի.

Իսէն մարդկան որ հանելի,
Առ Աստուծոյ ոչ զովելի.
Զի իւր միայն իւրքն յայտնի,
Որք մարդկան չեն հանդուշելի.
Այժմ ծածուկ յայտ աշխարհի,
Ցեսոյ փառաւք նշանելի:
Այս զիս որ սաս կարծիմ բարի,
Ցեսոյ անարգ և եղկելի:
Այլ տէր զԹով յամենայնի,
Թող զոր յանդգնոյ քեզ ի մարմնի:
Վասն որդոյ Աստուածածնին,
Դիր զեղկելիս երանելի.
Մոյծ ընդ Թուով զաւակաց
Զյաւիտենդ լուսն ի քում հաւուր.
Որ զաւհարեանս Թուես ի գիր
Քեզ ամենայն ծունր կրկնի:

Նախադրութիւն երկրորդ աւրինաց. — Գլուխք երկրորդ աւրինաց. — Կատարեցաւ երկրորդումն աւրինացս։

Զարհուրիմ ի քոց փառաց տէր իմ Մովսէս,
Անկանիմ առ ոտս քո ծառայես.
Յաւարտել հինգ գիրս ըղձը ըղձուրք աւրէնս,
Գոհանամ քեւ զԱստուծոյ բարեմտապէս.
Ներքողեան քեզ ընծայեմ աղքատապէս,
Նահապետ մարգարէիս աստուածատես.
Զանհաւր փառսն տեսեր արժանապէս,
Միջնորդաւք ոչ խաւսելով, այլ բաղերես:
Զերեսաց քոց հաւատալի փայլակնապէս,
Նշմարել ոչ ժուժէին հրէից համդէս:
Ըզբոլոր տիպ Յիսուսի պատկերապէս,
Բովանդակ ի քեզ ցուցեր խորհրդապէս.
Եւ զերկրորդ աւրէնքս գրեալ զատողապէս,
Զգուշանաւ պատուիրանին սիրողապէս.
Զի զաւրհնեալ կամ զանիծեալ մեկնակապէս,

digitised by A.R.A.R.@

Ըղձոլակ վարձուց առցես արդարադէտ։
Յետ որոյ խելոյն փոխեալ քո յաշխարհէս,
Յերկնայնոցըն յաւելցիր յանհաղ հանդէս։
Զի այսու իբր ի քնոյ զմեզ զարթուցես,
Իմանալ զհանդերձեալն ուսուցանես.
Թէ յերկրորդ գալն Յիսուսի աստուածապէս,
Փոխելոց է զմեզ ի կեանս անմահապէս.
Ընդ մարմնով վարուց առաւ քան անխառնապէս,
Եւ գործոց առնուլ վճար արժանապէս։
Անարգաց մնալ ի խաւար գոլ բոցակէզ,
Արդարոց հանգչել ի լոյս խրախճանապէս։
Այլ զմեզ կանուխ զԱստուած, մինչ Նորդապէս,
Որպէս յայնժամ ընդ հրէից կարեկցապէս.
Մի ընչել զմեզ ի կենաց զգրութեննէս,
Զգեղեցկութեամբ ի սուրբ զգայոյս աշխատապէս։
Եւ զոչխ զվիճակաւորել զոտաքից հանդէս,
Զընթերցողան յիշատակ առ ի զարդ զաւրացուցես։

Նախադրութիւն գրոց Յեսուայ որդւոյ Նաւեայ։ — Գլուխք գրոց Յեսուայ որդւոյ Նաւեայ. (ի սորա ինքն՝ Յանգք Յեսուայ)։ — Գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ։ — Կատարեցաւ Յեսու Նաւեայ։

Որ ես փրկիչ զարմանագործ տէր մեր Քրիստոս,
Դրօշելեալ քեզ զծաղկէր զՅեսուայն Յիսուս։
Որ եկաց յետ Մովսիսի, հրէից յոյս,
Ճանաչում քեզ առբնակ մնացուր և կեա։
Սքանչելեաւք զարմանոյս զգետն մշտահոս,
Զարեգակն ամենակալեաց առաւօս երկնաւ։
Քաջութեամբ մաշեաց ի սուր զհեթանոս,
Բաժանեաց Իսրայելի վիճակս արդարոյ։
Այլ դու տէր և պարգևիչ բարեաց նորոց.
Սուրբ խաչի քո զօրութեամբ, յոր բազմեալ դոս,
Հալածեա հեռագոյն զդժնեայն մեր չարախօսս.
Զի հասցուք մեք վիճակի սրբոցն ի լոյս։

Նախադրութիւն Դատաւորաց. — Գլուխք գրոց Դատաւորաց (ի սորա Յանգք Դատաւորաց). — Դատաւորք. — Կատարեցաւ Դատաւորք.

Փրկիչ անուն և դատաւոր,
Որ Քրիստոսի են բնակաւոր.
Յեսուայ եղաւ լոկ[լ]ազպաւոր,
Ուորոց կարգաւ են դատաւոր։
Դրեցաւ մեծ նախամայր տեսան ըստ մարմնոյ։
Զի անուանքս այս խորհրդաւոր,
Յոյսնեն խորհուրդ մեզ ահաւոր։
Թէ որ փրկիչն երախտաւոր,
Յետոյ գալոց է դատաւոր։

Նախադրութիւն Հռութայ.— Հռութ.— Կատարեցաւ Հռութ.

Կինս այս Հռութ, ի զաւակացն.
Ուրացեալ ի կեաց անուն, ազգի հրոյ.
Հաւատով դիմեալ յաստուածն Աբրահամու,

“Զներկեալս մեղաւք զՅովհաննէս, սուրբ մեան-նիս աստուածով յիշեցէք աղօթիւք ի տէր ով սուրբ ընթերցասեր և լսողք. և տէր զձեզ յիշէ ի բա-րին”։

Յառաջաբան նախակարգեալ Թագաւորութեանց. «Վասն ի յերկուս գիրս առ ի հեբրայեցւոց զպատմութիւնսն բաժանելոյ, զի քսան և երկու նշանագրաւք վարին Եբրայեցիք. աստուոց և քաղդէացւոց լեզուն նշանակաւ»։ —
Նախադրութիւնք Թագաւորութեանց։ — Գլուխք առաջին Թագաւորութեանցն. (ի

digitised by A.R.A.R.@

տորև իջին Յանգ Առաջին Թագաւորութեանց).— Թագաւորութեանց Առաջին։— կատարեցաւ Թագաւորութեանց առաջին։— Գլուխ Երկրորդ Թագաւորութեանց. (Յանգ...)։— Թագաւորութեանց Երկրորդ.— կատարեցաւ Թագաւորութեանց Երրորդ։— Գլուխք Երրորդ Թագաւորութեանց. (Յանգք...)— Թագաւորութեանց Երրորդ։— Թագաւորութեանց Չորրորդ։— կատարեցաւ Թագաւորութեանց Չորրորդ։

| | |
|---|---|
| Թագաւորք աստուածածնեալք, | Պահանջի ի նոցանէ, |
| Սուրբ և պղալի խաղաղաւետ· եք· | Կարծեմ բարի գոլ յանուանէ. |
| Իբր մարգարէից առաջնորդեալք. | Ոչ խոստովանել իսկ ի սկսանէ։ |
| Զերկնաւորին անուանն առեալք։ | Եւ ոչ պատմել իսկ ի նմանէ։ |
| Լուսոյն աստուածապաշտեալք. | Բայց թէ չար գոլ պատմանէ, |
| Գոն համհարոր պատկերացեալք. | Ըստ արժանեացն և չար կրէ. |
| Զարդն և խոստորեալք, | Որ յոյժ ծանանեք, |
| Մեծ հարուածովք եղեն տուժեալք։ | Մարդկան փրկիչն և ազատէ։ |

«Զմեծ յանցանաց սողոսկեալս՝ զՅովհաննէս որ փափաքանաւքս տոչորեալ ստացայ զսա. աղաչեմ յամենայն սրտէ իմմէ զանկիծ ընթերցաւղքդ, և զհոգեւորական լսաւղքդ՝ միով տէր ողորմայիւ յիշել զմեղկոյ գրիչս, և ըզծնաւղսն իմ և զեղբարս, և դուք յիշեալ լինիք ի տէր աստուած։

Յառաջաբան Առաջին և Երկրորդ Մնացորդաց։— Գլուխք Առաջին Մնացորդաց։— Առաջին։ Մնացորդաց։— կատարեցաւ Մնացորդաց Առաջին։— Գլխուք Երկրորդ Մնացորդաց։— Մնացորդ Երկրորդ.— կատարեցաւ Մնացորդաց Երկրորդ.— Նախադրութիւն Եզրի.— Գլուխք Առաջին գրոցն Եզրի։— Գիրք Եզրի Առաջին կատարեցաւ Եզր Առաջին։— Համառաւտք գլխոց Երկրորդ Եզրայ։— Եզրայ Երկրորդ։— կատարեցաւ Երկրորդ Եզրայ։— Նախադրութիւն գրոցն Նեեմեայ։— Գլուխք գրոցն Նեեմեայ։— Բանք Նեեմիայ որդւոյ Աքալիայ (Ի ստորև իջիցն Նեեմի, ուրիշ գրչով՝ դարձեալ Երրորդ Եզրի։— կատարեցաւ Նեեմի։

«Զրազմամթչուառ անձն մեղաւք ներկեալ ոգւոյս Յոհի" որ ստացա ըզսուրբ մատեանս. աղաչեմ զհանդիպողդ յիշել զիս և զծն" իմ։

Նախադրութիւն գրոյն Եսթերայ։— Եսթեր։— կատարեցաւ Եսթեր։— Նախադրութիւն գրոցս Յուդթայ։— Յուդիթ է գիրքս։— կատարեցաւ Յուդիթ։— Նախադրութիւն Տովբիթայ.— Տովբիթ։— կատարեցաւ Տովբիթ։— Նախադրութիւն Առաջին Մակաբայեցւոց։— Գլուխք Առաջին գըրոցն Մակաբայեցւոց. (Յանգք Առաջին Մակաբայեցւոյ)— Գիրք Առաջին Մակաբայեցւոց.(Ի ստորև իջիցն՝ Առաջին Մակաբէ, և մերթ Մակաբայեցւոց, կամ Առաջին Մակաբէ Յուդա, Առաջին Մակաբէ Յովնաթան, և այլըն։— կատարեցաւ Առաջին Մակաբայեցիքն։— Նախադրութիւն Երկրորդ Մակաբայեցւոցն։— Գիրք Երկրորդ Մակաբայեցւոց։— կատարեցաւ գիրք Երկրորդ Մակաբայեցւոցն։— Նախադրութիւն Երրորդ Մակաբայեցւոց։— Գիրք Երրորդ Մակաբայեցւոց։—

Երանելւոյն Եպիփանու Եպիսկոպոսի Կիպրացւոյ Յաղագս Երգոց Սաղմոսարանի. «Ամենայն ինչ զոր ասաց հայրն մեր Աթանաս, զոր լուեալ էր նորա ի հոգեկիր ծերոյն»....։— Եպիփանու Կիպրացւոց Յաղագս Սաղմոսաց Դաւթի. «Արդ առեալ, ասէ, Սամուէլ զսրուակ եւղոյն, և աւծ ըզԴաւիթ Թագաւոր»։— Գիրք Սաղմոսաց Դաւթի (և ի ստորևս իջիցն հետևեալ յիշատակարան)։

«Զաստուածային սիրոյ հրոյն բոցակիզեալ անձինք, զծերացեալսդ ի՞ մաստիւք և հասակաւ, և զմանկագունիցդ զաւրինաց յիրս և ի բանս որ

digitised by A.R.A.R.@

Աստուծոյ է հաճելի, զսուրբ զարշապարացդ յամենայն զաւրութենէ մեղաւորս Յով" և ոչ արժանիս յիշատակի, սուրբ սիրով և հաստատ յուսով բուռն հարեալ կախիմ զոտքաւք. և աղերսիւ թաւալիմ առաջի, ներեցէք աղաչեմ: Եւ վասն իմ Նուէր տուք Աստուծոյ զաղաւթս ձեր, և մեղաց իմոց թողութիւն խնդրեցէք. այլ և ծնողացն իմոց և եղբարց, և ողորմածն Աստուած զձերն թողցէ սխալանս»։

Նախագրութիւն Առակացն։— Գլուխք առաջնոյ բանի Առակացն։— Առակք Սողոմոնի որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայելի յԵրուսաղէմ.— Առակք Սողոմոնի տունք ՌԶԾ։— Նախագրութիւն Ժողովողին։— Գլուխք Ժողովողին։— Բանք Ժողովողին որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայելի յԵրուսաղէմ. Եկլեսիաստէս. (ի ստորև Ժողովաւղ),— Եկլեսիաստէ տունք Զէ։— Նախագրութիւն Երգոյ Երգոցն։— Երգ Երգոց, որ է աւրհնութիւն աւրհնութեանց, ասացեալ Սողոմոնի արքայի Իսրայելի։— Նախագրութիւն Իմաստութեանն Սողոմոնի։— Գլուխք Իմաստութեանն Սողոմոնի։— Տեառն Ներսիսի յիշատակարան Առակացն Սողոմոնի, զոր իւրով ձեռամբն գրեաց, զարթուցանել զթմբրեալս մեղաւք. «Աստուածեղէն հոգւոյն ի սմա, խաղաղութեան անուն արքայ»։— Անդրադարձութիւն տառիս յիշատակի, «Բաղցրացուցիս այս բաղձանաւք, Լցեալ հոգիս մեռեալ մեղաւք»....

«Զվաղնջուց ի մահուչափ գլորեալ ի մեղս, և որ դեռ ես ի նոյն չարաեւհոտ բազմախայթ վէրս պալեկեալ նստիմ. զՅովհաննէս որ խարեալս եմ մտացս խղճիւ. որ ի չար ժամու անիմաստ անձամբ, պակաս ի գրչութեան արուեստէ, վասն առոյգ աւրինակաց ստացայ զսա առ ի յիշատակ ինձ և ծնողացն իմոց և հարազատացն Սմբատայ և Վասլի. և որ զկնի մեր արժանի լինիցին ժառանգել զաստուածաշունչ տառս, յիշեցէք ի տէր»։

Նախագրութիւն Յոբայ։— Յուլիանեայ Եպիսկոպոսի Ալիկառնացւոյ. «Նշանակէ գիրք երանելւոյս Յոբայ եթէ հինգերորդ էր յԱբրահամէ»։— Գիրք Յոբայ։— Կատարեցաւ գիրքս Յոբայ. «Զամենամեղս Յոհանէս ըստացաւղս աստուածաշունչ տառիս աշխատանաւք և գրչութեամբ իմոյ ձեռինս. և այս՝ զի պակաս եմ յարուեստ գրչութեանս. այլ սիրովն որ ի սա՝ զիս ես ինձէն մտացայ. ոչ վասն մարմնական ինչ շահից. այլ միայն զի ի հանդիպողացդ վայելից յաղաւթս. աղաչեմ վասն սիրոյն Աստուծոյ յիշեցէք ի տէր թողուլ զանեզր յանցանս իմ. Նա եւ զծնաւղսն իմ. զհայրն իմ զՅովհաննէս երէց, և զպարկեշտ մայրն իմ զՄամախաթուն. և զերկու եղբայրըն իմ զՍմբատ և զՎասիլ. և տէր ձեզ տացէ բարիս»։ Նէ.

— Յառաջաբան Եսայեայ մարգարէի։— Գլուխք գրոց Եսայեայ մարգարէի։— Մարգարէութիւն Եսայեայ։— Կատարեցաւ մարգարէութիւն Եսայեայ։— Մահ Եսայեայ մարգարէի։— «Զկարաւտս ողորմութեան զՅովհաննէս ստացաւղ աստուածաշունչ տառիս իմոյ ձեռինս աշխատութեամբ յիշման ի բարի արժանի արարէք. նաև զծնաւղս իմ և զեղբարս իմ, և տէր ըզձեզ արժանաւոր բարեաց արասցէ։ Եվ եղբարք՝ թէ ի մեղաւոր գրողիս աշխատանքն՝ որ խեղաթիւր է և անարուեստ, մարդկաբար նայիք՝ ապա վայ է զիս ի լեզուէդ ձեր։ Այլ ներեցէք, և տէր ձեզ. ամէն»։

— Նախագրութիւն Երկոտասան Մարգարէիցն։— Գլուխք Ովսէի մարգարէի (ի ստորև իջիցն. Գիրք տեսլեանց երկոտասան սուրբ Մարգարէից։— Կատարեցաւ մարգարէութիւն Ովսեայ։— Գլուխք Ամովսայ մարգարէի։— Մարգարէութիւն Ամովսայ։— Կատարեցաւ մարգարէութիւնն Ամովսայ։— Գլուխք Միքիայ մարգարէի։— Մարգարէութիւն Միքիայ։— Կատարեցաւ

digitised by A.R.A.R.@

մարգարէութիւնն Միքիայ։ — Գլուխք Յովելայ մարգարէի։ — Մարգարէութիւն Յովելայ։ — Կատարեցաւ մարգ. Յովելայ։ — Գլուխք Աբդիու մարգարէի։ — Մարգարէութիւն Աբդիու։ — Կատարեցաւ մարգարէութիւն Աբդիու։ — Գլուխք Յովնանու մարգարէի։ — Մարգարէութիւն Յովնանու որ եղեւ յաւուրս Ոզիայ (Աքազու)։ — Կատարեցաւ մարգարէութիւնն Յովնանու։ — Մարգարէութիւն Նաւումայ, (ի ստորեւ իլքին՝ Յաւուրս Եզեկիայ էր Նաւում)։ — Կատարումն մարգարէութեանն Նաւումայ։ — Մարգարէութիւն Ամբակումայ։ — Կատարեցաւ մարգարէութիւն Ամբակումայ։ — Գլուխք Սոփոնիայ մարգարէի։ - Մարգարէութիւն Սոփոնիայ։ - Կատարումն մարգարէութեանն Սոփոնիայ։ - Յառաջաբան Անգէի- Մարգարէութիւն Անգեայ։ — Կատարեցաւ մարգարէութիւնն Անգեայ։ — Գլուխք Զաքարեայ մարգարէի։ — Մարգարէութիւն Զաքարեայ։ — Կատարումն մարգարէութեանն Զաքարիայ։ — Գլուխք Մաղաքիայ մարգարէի։ — Մարգարէութիւն Մաղաքիայ։ — Կատարումն աստուծով երկոտասան սուրբ մարգարէից։ — Մահ երկոտասան մարգարէից։ — Մահ Դանիելի մարգարէի։ — «Զկարաւտս ողորմելոյ կոտտամաճ ի մեղաց լեալս՝ զՅովհաննէս յարգար գործոց նուաստեալս՝ զսուրբ մարգարէիցս մեզսաչափեալս անձին ստացաւղս յիշեցէք մի տէրողորմայիւ և մի հայր մեր յերկինս. և տէր ձեզ տայ անրաւ բարի։ ՋԿԸ։ — Նախադրութիւն Երեմիայ մարգարէի։ — Գլուխք Երեմիայ մարգարէի։ — Գիրք Երեմիայ մարգարէի։ — Թուղթ Բարուքայ. տունք ՎՊ։ — Ողբք սորոյն Երեմիայ մարգարէի։ — Կատարումն ի տէր մարգարէութեանն Երեմիայ։ — Մահ Երեմիայ մարգարէի։

«Զմեղաւոր ծառայս Քրիստոսի Աստուծոյ Յովհաննէս յիշեցէք ի մեղաց թողութիւն. Եւ որք լուսաւորիք ի սուրբ մարգարէիցս յաստուածաշունչ տառէս զինչ եւ իցէ ի պատճառս հանդիպման. աղաչեմ սրտի մտաւք՝ այլ և արտասուաւք միոյ տէր ողորմի արժանի զանարժանս արարէք. և տէրն փառաց ձեզ տացէ յողորմութենէ իւրմէ։ ՋԿԸ»։

— Նախադրութիւն Դանիելի մարգարէի։ — Գլուխք Դանիելի մարգարէի։ — Մարգարէութիւն Դանիելի։ — Կատարեցաւ մարգարէութիւն Դանիելի։ — «Ով եղբարք որ զահաւոր և զսոսկալի լսէք զմարգարէիս բան՝ զմեղաւորս Յոհաննէս յիշեցէք ի մեղաց թողութիւն. և տէր զձեզ յիշէ։ ՋԿԸ»։

— Նախադրութիւն Եզեկիելի մարգարէի։ — Գլուխք գրոց Եզեկիելի մարգարէի։ — Մարգարէութիւն Եզեկիելի։ — Կատարեցաւ մարգարէութիւն Եզեկիելի։ — Մահ Եզեկիելի մարգարէի։

«Փառք սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտ...։ Ես մեղաւորս Յովհաննէս՝ ըստ կարի զփափաքս իմ լցի յանկ ելանելովս. և այս եղև ներհլումն Աստուծոյ, զի յանարժանէս թերեւս արժանաւոր այս գործք եղև յանցեալն. և զայս ոչ ասեմ վասն դեղապատճոյճ շարագրութեանցս. այլ վասն ազնիւ աւրինակիս զոր սուրբ և երանեալ վարդապետին Գէորգեա ձեռացըն շարադրեալ էին. աղաչեմ զծառանդաւղսդ, եւս և զհանդիպաւղսդ ներեցէք աղալմանս ի սա և սիրով ուղղեցէք. և միոյ տէր ողորմի արժանի արարէք զողորմելի գրիչս Յով". և զծն". և զևդր"։ (Կարմրագիր՝ ի ստորեւս իլքիցն). Աւարտի սա՝ մայիսի Ժ։

Շարունակելի